# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

31ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 25 (1525) ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 9, 2011
VOLUME 31, NO. 25 (1525) SATURDAY, JULY 9, 2011

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ԻԼԻԱ Բ. ԴԷՄ Է ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԻՐԱՒԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏԱԼՈՒ ՕՐԻՆԱԳԾԻՆ

Ամենայն Վրաց պատրիարք Իլիա 2-րդը յատուկ յայտարարութեամբ դիմած է Վրաստանի խորհրդարանին ու կոչ ըրած՝ կասեցնել քաղաքացիական օրէնսգրքի փոփոխութիւնները, որոնց համաձայն պատգամաւորները կը պատրաստուին իրաւական անձի կարգավիճակ տալ Վրաստանի մէջ գործող հինգ կրօնական կազմակերպութիւններու, որոնց շարքին՝ Հայ առաքելական եկեղեցւոյ:

«Մեր եկեղեցին երբեք դէմ չէ եղած կարգավիճակ տրամադրելուն, սակայն կառավարութիւնը պարտաւոր էր այս հարցի շուրջ բազմակողմ պետական յանձնաժողով ստեղծել»,- յայտարարած է Վրաց եկեղեցւոյ առաջնորդը:

Հարցը յանձնաժողովի միջոցով լուծելու մասին Իլիա երկրորդը յայտարարած էր Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդի՝ Յունիսին Վրաստան կատարած այցի ժամանակ:

«Եկեղեցիներու մասին խօսելու ժամանակ պէտք չէ մոռանալ, որ երկու կողմերն ալ պահանջներ ունին», - յայտարարած էր Վրաց պատրիարքը ու առաջարկած է հայկական կողմին, համապատասխան յանձնաժողով ստեղծել՝ վիճայարոյց հարցերը քննարկելու համար:

Թէեւ հոգեւոր առաջնորդները համաձայնութեան չեկան, այդուհանդերձ, Վրաստանի իշխող «Ազգային շարժում կուսակցութիւնը»՝ Նախագահ Սահակաշվիլիի գլխաւորութեամբ, անցեալ շաբաթավերջին շրջանառութեան մէջ դրած էր օրէնսդրական փոփոխութիւնը ու առաջին ընթերցմամբ ընդունած էր զայն:



Ամենայն Վրաց պատրիարք Իլիա 2-րդ

«Այդ որոշումը անակնկալ էր ոչ միայն հոգեւոր դասին, այլեւ Վրաստանի ժողովուրդի համար»,- ըսած է Իլիա երկրորդ: Ըստ «Ազատութիւն» ռատիոկայանի վրացական ծառայութեան, հոգեւոր առաջնորդի այս յայտարարութիւնը մեծ աղմուկ բարձրացուցած է երկրի աշխարհիկ վերնախաւի մօտ: Ընդդիմադիր ուժերը կը պնդեն, թէ իշխանութիւնները կը դաւաճանեն ազգային շահին ու կը շրջանցեն նոյնիսկ պատրիարքի յորդորները:

Հակառակ բողոքներուն, որոշուած է շարունակել օրէնքի քննարկումները: «Յետաձգելու կարիք չկայ»,- յայտարարած է իրաւական հարցերով զբաղող յանձնաժողովի նախագահ Պավլէ Կուբլաշվիլի, շեշտելով որ, կրօնական կազմակերպութիւններուն իրաւական կարգավիճակ տրամադրելու հարցը կը գտնուի միայն խորհրդարանի իրաւասութեան ներքեւ:

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՊԻՏԻ ՃՇԴԷ ԻՐ ՀԵՏԱԳԱՅ ՔԱՅԼԵՐԸ՝ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑՈՎ

Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերգէյ Լավրով, Յուլիս 6-ին Մոսկուայի մէջ հանդիպելէ ետք Հայաստանի իր պաշտօնակից՝ Էդուարդ Նալբանդեանի հետ, յայտարարեց որ, Ռուսաստանի նախագահ Դիմիտրի Մեդվեդեւ շատ մօտ ապագայ
ին որոշում կ՛ընդունի ղարաբաղեան հարցի կարգաւորման շուրջ հետագայ քայլերու վերաբերեալ:

«Երկու տարի առաջ, հաշուի առնելով Ռուսաստանի յատուկ յարաբերութիւնները թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Ատրպէյճանի հետ, Դիմիտրի Մեդվեդեւ որոշած էր ակտիւ եռակողմ բանակցութիւններ անցկացնել ղարաբաղեան հարցի կարգաւորման հիմնարար սկզբունքներու համաձայնեցման նպատակով: Այսօր այդ գործընթացը եզրափակիչ փուլ հասած է, եւ ըստ էութեան, որոշումներ ընդունելու ժամանակն է», - ըսաւ Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան ղեկավարը:

Լավրովի համաձայն, Դիմիտրի Մեդվեդեւ՝ որպէս միջնորդ, որ կը գործէ, ունենալով ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի համանախագահ միւս երկու երկիրներու՝ ԱՄՆ-ի եւ Ֆրանսայի աջակցութիւնը, այսօր արդէն վերլուծած է Կազանի մէջ կայացած հանդիպումէն յետոյ ստեղծուած իրավիճակը եւ մօտ ժամանակներս որոշում կը կայացնէ, թէ ինչ պէտք է ընել:

Ռուսաստանի արտաքին գործոց նախարարը յիշեցուց նաեւ, որ թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Ատրպէյճանի նախագահները պարտաւորութիւն ստանձնած են՝ Լեռնային Ղարաբաղի հարցը բացառապէս լուծել խաղաղ բանակցութիւններու միջոցաւ:

Միւս կողմէ, ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներ՝ Պեռնար Ֆասիէ (Ֆրանսա), Ռոբերդ Պրադկէ (ԱՄՆ) եւ Իգոր Պոպով (Ռուսաստան) Յուլիս 5-ին հրապարակած են յայտարարութիւն մը, ուր ըսուած է թէ, «Անկախ այն բանէն, որ կողմերը Կազանի մէջ վերջնական համաձայնութեան չեկան՝ հիմնարար սկզբունքներու վերաբերեալ, սակայն յառաջընթաց արձանագրուեցաւ»:

ԵԱՀԿ-ի կայքէջին վրայ հրապարակուած հաղորդագրութեան համաձայն, համանախագահները, ինչպէս նաեւ ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անճէյ Կասպրչիկ, Յուլիս 4-ին հանդիպումներ ունեցած են ԵԱՀԿ-ի գլխաւոր քարտուղար Լամբերտո

Շար.ը էջ 4

## ՀԸԶՊԱԼԼԱՀԻ ՉՈՐՍ ԱՆԴԱՄՆԵՐ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԵՑԱՆ ՌԱՖԻՔ ՀԱՐԻՐԻԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑՈՎ

Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիք Հարիրիի սպանութեան հարցով ստեղծուած ՄԱԿ-ի միջազգային դատարանի դատախազ՝ Տանիէլ Պելմար ամբաստանագիր յղեց Լիբանանի դատախազութեան, պահանջելով ձերբակալութիւնը չորս անհատներու: Լրատուական աղբիւրներու համաձայն այդ չորս անձերը անդամ են Իրանի համակիր Հըզպալլահ զինեալ կուսակցութեան:

Չորս ամբաստանեալներէն Մուսթաֆա Պատր Էլտինն մաս կը կազմէ Հըզպալլահի ղեկավար մարմինին եւ կը նկատուի այդ կուսակցութեան զինուորական պատասխանատուն:

Ամբաստանագիրերու հրապարակումէն ետք, Ռաֆիք Հարիրիի որդին, նոյնպէս նախկին վարչապետ, Սաատ Հարիրի դատախազի որոշումը նկատեց իբրեւ Լիբանանի եւ միջազգային ընտանիքի յաղթանակը, ինչպէս նաեւ արդարութեան յաղթանակը: Հարիրի դիտել տուաւ, որ անհրաժեշտութիւն չկայ խուսափելու պատասխանատուութենէ, որովհետեւ ամբաստանագիրը պատմական հանգրուան մըն է համայն Լիբանանցիներուն համար: Ան ըսաւ, թէ ճշմարտութեան ժամը հասած է, իսկ ոճրագործները հաշիւ պիտի տան արդարութեան առջեւ:



Հարիրիի սպանութեան հարցով ամբաստանուող Մուսթաֆա Պատր Էլտին

Հարիրի նաեւ դիտել տուաւ, որ Լիբանան շատ սուղ վճարեց արդարութեան գինը, սակայն վերջաւորութեան հասաւ յաղթանակի: Նախկին վարչապետը ըսաւ, թէ խռովարարութեան հանգրուանը աւարտած է, փոխարէնը սկսած է արդարութեան գործադրութիւնը:

Միւս կողմէ սակայն, Հըզպալլահի առաջնորդ՝ Շէխ Հասան Նասրալլահ դատարանի որոշումը որակեց «քաղաքականացուած»: Ան դատարանը նկատեց Ամերիկայի եւ Իսրայէլի ձեռքին գործիք, որուն միջոցաւ անոնք կը ձգտին հարուածելու Իսրայէլի դէմ պայքարող իրենց շարժումը:

## ՎԱՏԻԿԱՆ ՊԻՏԻ ՀՐԱՊԱՐԱԿԷ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԳԱՂՏՆԻ ԱՐԽԻՒՆԵՐԸ

Վատիկան կը պատրաստուի բանալ իր գաղտնի արխիւները: Այս մասին, ինչպէս կը գրէ Թրքական «Հուրրիյէթ» օրաթերթը, յայտարարած է Վատիկանի արխիւներու պատասխանատու մոնսենիոր Սերճիօ Բականի:

Վատիկանի արխիւներու պատասխանատուն տեղեկացուցած է, որ 8-էն մինչեւ 20-րդ դարու երկրորդ կիսուն վերաբերող գաղտնի արխիւները պիտի բացուին Փետրուար 2012-ին եւ ցուցադրուին «Lux in Arcana» ցուցահանդէսին:

Մոնսենիոր Սերճիօ Բականի նշած է, որ հրապարակուելիք արխիւներուն մէջ առկայ են փաստաթուղթեր Օսմանեան կայսրութեան կողմէ 20-րդ դարասկիզբին հայերու դէմ իրականացուած Ցեղասպանութեան մասին:

«Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ փաստաթուղթերուն մէջ ներկայացուած են Թուրք զինուորներու դաժան բռնութիւնները, որոնք ուղղակի անմարդկային են»,- ըսած է Բականի:

Վերջերս Հայաստան այցելած Վատիկանի մշակութային հարցերով պապական խորհուրդի նախագահ Ճանֆրանքօ Ռավասի յայտնած էր, որ կը նախատեսուի յառաջիկայ տարիներուն հայ-վատիկանեան մշակութային շփումները աշխուժացնել, ու այդ նպատակաւ կը կազմակերպուին ցուցադրութիւններ՝ Վատիկանի եւ Հայաստանի մէջ:

# ԻՐԱՎԻՃԱԿԸ ՍԵՐԺԻ ԵՒ ԼԵՒՈՆԻ ՇՐՋԱՊԱՏՈՒՄ

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

*Յունիսի 30-ի հանրահաւաքում Հայ ազգային կոնգրէսի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը բարձրացրեց Սերժ Սարգսեանի ու նրա շրջապատի փոխյարաբերութեան խնդիրը, ասելով, որ Սարգսեանը երկխօսութեան հարցում կամուկացի մէջ է, որովհետեւ նրա շրջապատը, սովոր լինելով կրակելուն եւ բանտ նստեցնելուն, չի կարողանում պատկերացնել այլ որակի յարաբերութիւն:*

*Ինչ է ստացւում: Ստացւում է, որ Սերժ Սարգսեանն էականօրէն տարբերւում է իր շրջապատից եւ սովոր չէ կրակելուն ու բանտ նստեցնելուն, իսկ ահա նրա շրջապատն այդպիսին լինելով կաշկանդում է նրան երկխօսութեան գործում աւելի օպերատիւ լինելու հարցում:*

*Իրականում, այստեղ թերեւս գործ ունենք բաւական խորքային մի երեւոյթի հետ, որը վերաբերում է թէ իշխանութեան, թէ ընդդիմութեան կառուցւածքին: Եթէ շրջապատը կաշկանդում է Սերժ Սարգսեանին, նշանակում է, որ Սարգսեանը իր գործողութիւնների համար հաշուետու է իր շրջապատին: Այսինքն, նա պէտք է շրջապատին բացատրութիւն տայ, թէ իր գործողութիւններն ինչքանով են բխում այդ շրջապատի շահից, ինչքանով են սպասարկում այդ շահը, ինչի են հանգեցնելու, ինչ ռիսկեր ու վտանգներ են պարունակում, ում համար, երբ, եւ այլն:*

*Եթէ Սերժ Սարգսեանն այդ բացատրութիւնները չտայ, ապա նրա շրջապատը բնականաբար թոյլ չի տայ, որ նա երկխօսի ընդդիմութեան հետ: Այսինքն, իշխանական համակարգում այդ առումով իրադրութիւնը դրուած է յստակ շահերի վրայ եւ չի աշխատում այսպէս ասած հաւատի ու վստահութեան մեխանիզմը, «Սերժը գիտի, թէ ինչ է անում» եւ այդ կարգի այլ տարբերակները: Սերժ Սարգսեանը ստիպուած է ամէն քայլի համար լինել հաշուետու եւ հիմնաւորել համակարգին, որ այդ քայլն իր մէջ աւելի շատ օգուտ, քան ռիսկ է պարունակում:*

*Այդ տեսանկիւնից, ինչ վիճակ է Տէր-Պետրոսեանի շրջապատում: Դա հասկանալու համար, նախ պէտք է հասկանալ, թէ իսկ որն է Տէր-Պետրոսեանի շրջապատը: Նրա շրջապատը Կոնգրէսի քաղխորհո՞ւրդն է, լիդերների աւելի լայն շրջանա՞կը, թէ ակտիւը, որ կազմում է մի քանի հարիւր մարդ: Երեւի թէ շրջապատ հասկացութիւնը տուեալ դէպքում պէտք է ենթադրի շահառուների շրջանակը: Այդ իմաստով, Տէր-Պետրոսեանն ու Կոնգրէսը շահառուների շրջանակ են հռչակել ամբողջ հասարակութիւնը եւ ներկայացրել են հանրութեան շահը սպասարկելու յայտ: Հետեւաբար, տուեալ պարագայում Տէր-Պետրոսեանի շրջապատը դա ոչ քաղբիւրոն է, ոչ լիդերների աւելի լայն շրջանակ, ու ոչ էլ ակտիւը, այլ հասարակութիւնն ընդհանրապէս, քանի որ Տէր-Պետրոսեանը խօսում է հասարակութեան անունից եւ նրա շահից գործելու մասին:*

*Ուրեմն, տալի՞ս է արդեօք Տէր-Պետրոսեանը բացատրութիւններ իր շրջապատին: Այդ շրջապատում գործո՞ւմ է արդեօք նրան կաշկանդելու մեխանիզմ, երբ նա կարող է շատ ուզել անել ինչ որ քայլ, բայց շրջապատը, այսինքն հասարակութիւնը, այդ բանը թոյլ չտայ, դրանում չտեսնելով համոզիչ օգտաւէտութիւն: Մարտի հանրահաւաքներից մէկում յայտարարուեց, որ Կոնգրէսի հանրահաւաքները վերածւում են հասարակական ֆորումների, որոնք օժտուած են որոշումներ կայացնելու եւ իրացնելու լիազօրութեամբ:*

*Մինչ այժմ ի՞նչ նշանակալի որոշումներ է քննարկել եւ կայացրել հանրահաւաքը: Իհարկէ կարող են ասել, որ կայացուել է երթով Ազատութեան հրապարակ գնալու որոշում: Իհարկէ, կարելի է ասել, բայց կարելի է արդեօք հաւատալ այդ ասածին, որ որոշումը կայացրել է հանրահաւաքը: Կոնգրէսի ղեկավարութեան համար պարզ էր, որ երբ էլ հարցնի հանրահաւաքի մասնակիցներին, նրանք ասելու էին, որ համաձայն են հրապարակ գնալուն: Հետեւաբար Կոնգրէսը գնացել է այն ժամանակ, երբ ոչ թէ հանրահաւաքն է նպատակայարմար համարել, այլ Կոնգրէսի լիդերները, որոնք ընդամէնը ստեղծուեցին հանրահաւաքի որոշման կայացման իմիտացիա:*

*Միակ որոշումը, որ իրապէս կայացրել է հանրահաւաքը, դա իհարկէ Օգոստոսի 1-ին յաջորդ հանրահաւաքն անելու Յունիսի 30-ի հանրահաւաքի որոշումն էր: Որոշում, որը գործնականում ոչինչ չնշանակող մի բան է այն դէպքում, երբ Կոնգրէսը իշխանութեանը ժամանակ է տալիս մինչեւ Սեպտեմբեր: Օգոստոսի 1-ի հանրահաւաքը վերածւում է տուեալ դէպքում ֆորմալ ձեւականութեան, եւ թերեւս այդ պատճառով էլ Կոնգրէսի լիդերները հանրահաւաքին տուեցին ընտրութեան հնարաւորութիւն:*

*Միգուցէ ճիշդը դա է, եւ լուրջ քաղաքականութիւնը պէտք է իրացնել մի քանի հոգով, կամ մի քանի տասնեակ հոգով, բայց ոչ թէ հարիւր կամ հազար: Բայց, խնդիրն այն է, որ այդ մի քանի տասնեակի շրջանակում, Կոնգրէսում կարծես թէ ընդհանրապէս վերանում է լիդերի հաշուետուութեան իրական երեւոյթը, եւ ձեւաւորւում է Տէր-Պետրոսեանի մօտեցման անառարկելի գերակայութիւն: Դրա վկայութիւնն է թէկուզ այն, որ հանրահաւաքի ընթացքում տարբեր ելոյթ ունեցողներ բոցաշունչ ելոյթներ են ունենում իշխանութեան անելանելիութեան եւ ժողովրդի յաղթանակի մասին, իսկ վերջում Տէր-Պետրոսեանը ամփոփում է եւ տալիս սպասելու եւ չոգեւորուելու հերթական հրամանը: Եւ յատկանշականն այն է, որ դրանից յետոյ բոլոր ոգեւորուած ելոյթների հեղինակները յայտարարում են, որ ճիշդը սպասելն է: Միգուցէ ճիշդը սպասելն է, բայց այդ դէպքում ինչ կարիք կայ հանրահաւաքին ոգեւորուելու, եթէ Տէր-Պետրոսեանից յետոյ միեւնոյն է բոլորը սպասելու են:*

*Եւ այն, որ Յունիսի 30-ին Ազատութեան հրապարակը մեղմ ասած նկատելիօրէն սակաւամարդ էր, յուշում է, որ հասարակութիւնը ինքն իրեն տալիս է այդ հարցն ու ստանում պատասխան, որ ոգեւորուելու կարիք չկայ, հետեւաբար չկայ նաեւ հանրահաւաքի գնալու կարիք, եթէ այնտեղ հազարերորդ անգամ պէտք է լսուեն նոյն բաները: Քանի դեռ Կոնգրէսը չունի այդ իրողութիւններին եւ ռիսկերին բաց նայելու համարձակութիւն, եւ քանի դեռ դրանք մատնանշողները հռչակւում են մեղմ դէպքում անմիտ, իսկ ընդհանրապէս ծախուած հերետիկոսներ, Սերժ Սարգսեանն ու իր շրջապատն իրենց ներքին շատ աւելի դեմոկրատական մեխանիզմի առկայութեան պարագայում շատ աւելի ճկուն են խաղալու, քան Կոնգրէսը:*

*Խօսքն այստեղ բացարձակապէս որակների, գործունէութեան մեթոդների եւայլնի մասին չէ: Խօսքն ընդամէնը շրջապատներում առկայ որոշումների կայացման մեխանիզմների մասին է: Սկզբունքօրէն, խոշոր հաշուով, իշխանական համակարգում ներքին մեխանիզմը իր ամբողջականութեան մէջ թերեւս աւելի մօտ է դեմոկրատականին, քան ընդդիմութեան մօտ: Եւ առկայ իրողութիւնների պարագայում, նոյնիսկ այն դէպքում, երբ այդ ամէնը տեղաւորւում է հանդուրժողութեան շրջանակներում, իշխանութիւնը խաղալու է աւելի ճկուն: Եւ նաեւ հենց իշխանութեան այդ առաւել ճկուն խաղի արդիւնքն է գուցէ, որ իրավիճակը հասցուեց հանդուրժողութեան շրջանակի, խուսափելով բիրտ ուժի կիրառման հարկադրանքից:*

*Բանն այն է, որ այդպիսի մեխանիզմի առկայութիւնը ցանկացած քաղաքական ուժի եւ առաջնորդի ամրութեան, ճկունութեան գրաւական է: Տէր-Պետրոսեանը ամբողջութեամբ գործի դնելով իր խարիզման եւ յայտարարելով, որ ինքնագործունէութիւնը դատապարտելի է, ինքն իրեն փաստացի զրկել է ճկունութեան հնարաւորութիւնից եւ Կոնգրէսը դրել կամ-կամի առաջ:*

*Կամ տեղի է ունենում այդ կառոյցի լուրջ ռեֆորմացիա եւ այդտեղ գործնական բազմակարծութեան եւ դեմոկրատիայի տարրեր են ներդրւում, նպաստելով կառոյցի ադեկվատութեան բարձրացմանն ու ներգրաւուած շրջանակների ընդլայնմանը, այդպիսով նոր շունչ հաղորդելով պայքարին, կամ Կոնգրէսը շարունակում է մնալ առաւելապէս հեղինակութիւնների կառոյց, բայց, դատելով վերջին զարգացումներից ու աւելի եւ աւելի ակնյայտ դարձող ռիսկերից՝ մնալ, կամ վերածուել, աւելի շատ որպէս հեղինակութիւնների քաղաքական «դամբարան»:*

*Կոնգրէսի գաղափարն ինքնին, իր նախնական պատկերացումների շրջանակում, թերեւս ենթադրում էր Հայաստանում ներքին ժողովրդավարութեամբ յագեցած աննախադէպ կառոյցի ձեւաւորում, կայացում եւ զարգացում: Կոնգրէսի համար, կարծում եմ, որ լուրջ ձախողումը ոչ թէ այն է, որ երեք տարի է, ինչ չի կարողանում լուծել «աւազակապետութեան կազմաքանդման» հռչակուած խնդիրը, այլ այն, որ չստացուեց իրապէս լայն հասարակական եւ ազգային կառոյցի ձեւաւորումը, եւ շրջանակը առաւել ընդլայնուելու փոխարէն առաւել նեղացաւ:*

*Անշուշտ, Հայաստանի ներքաղաքական կեանքում աննախադէպ երեւոյթ է ընդդիմութեան յետընտրական ինստիտուցիոնալացումը: Բայց դա պէտք է դիտարկել ոչ թէ որպէս նպատակ, այլ որպէս միջոց: Հայ ազգային կոնգրէս գաղափարը ինստիտուցիոնալացուեց, բայց առաւելապէս որպէս քաղաքական ինստիտուտ, որին սպասարկում է հասարակական բաղադրիչը: Մինչդեռ պէտք է թերեւս լինէր հակառակը: Տարուելով իր քաղաքական գործառոյթներով, քաղաքական գործառնութիւններով, Կոնգրէսը թերեւս անուշադրութեան մատնեց հասարակական աւելի լայն գործառոյթներն ու գործառնութիւնները, իսկ դրանցով զբաղուելու պարագայում էլ՝ արդիւնքը դիտարկել զուտ քաղաքական նպատակայարմարութիւնների պրիզմայով:*

*Ներկայիս քաղաքական իրավիճակը Կոնգրէսին կարծես թէ այլեւս չի տալիս հետ շրջուելու հնարաւորութիւն, եւ թերեւս ճիշդ կը լինի, որ Կոնգրէսը հասարակութեանը գոնէ թոյլ չտայ գնալ իր հետեւից, բացատրելով, որ ինքն այդպէս գնում է ոչ մի տեղ: Իսկ աւելի ճիշդ կը լինէր իհարկէ, որ խաղի եւ համակեցութեան այդպիսի կանոնները լռելեայն ընդունած Կոնգրէսի լիդերութիւնն ինքը շարունակէր այդ ճանապարհը, Կոնգրէսում գտնուող կամ համակիր բազմաթիւ ադեկվատ շրջանակներին ու շերտերին թոյլ տալով մի քիչ հետ գնալ, ու սկսել նորից՝ այս անգամ աւելի լայն ընդգրկումով եւ շրջապատով:*

*«ԼՐԱԳԻՐ»*

**ՄԱՍԻՍ**
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**

***ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ***
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)

Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES: USA $50.00, Canada $60 (Second Class), $80.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To
MASSIS WEEKLY

# ՀԱՅԱՍՏԱՆ

## ՀԱԿ-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆՐԱՀԱՒԱՔԸ



Տեսարան մը Ազատութեան հրապարակի վրայ հաւաքուած ժողովուրդէն

Յունիս 30-ին Ազատութեան հրապարակում տեղի ունեցաւ Հայ ազգային կոնգրէսի հերթական հանրահաւաքը, որը ո՛չ «Ջրբաժանի», ո՛չ էլ իշխանութիւնների հետ երկխօսութեան մեկնարկի արձանագրման մասին փաստեց: Հանրահաւաքի ամփոփումն էլ, ըստ էութեան, այն էր, որ ՀԱԿ-ն իր պահանջած ձեւաչափով իշխանութիւններին երկխօսութիւն սկսելու ժամանակ տուեց մինչեւ Սեպտեմբեր: Այն, որ ե՛ւ Կոնգրէսը, ե՛ւ իշխանութիւնները հակուած են միմեանց ու նաեւ հասարակութեան հետ յարաբերութիւններում ժամանակ շահել՝ կարծես թէ, փաստ է: Իսկ հանրահաւաքը վարում էր «ՀԺ» խմբագիր Նիկոլ Փաշինեանը: Նա, նախ, անդրադարձաւ Սերժ Սարգսեանի՝ ԵԽԽՎ-ում արած յայտարարութեանն առ այն, որ եթէ յանկարծ նորից պատերազմ սկսուի՝ Ադրբեջանն առաւելութիւն կ՛ունենայ, որովհետեւ իր ժողովրդին 20 տարի շարունակ պատրաստում է պատերազմի: Այդ յայտարարութիւնը գնահատելով որպէս «Երրորդ հանրապետութեան դիւանագիտութեան պատմութեան մէջ ամենայ խայտառակներից մէկը», Փաշինեանը նկատեց, որ «եթէ ոեւէ մէկը Հայաստանում կամ նրանից դուրս նման յայտարարութիւն անէր, իշխանական խօսնակները վրայ կը տային, կ՛անուանէին ադրբեջանական քարոզչութեան հլու կամակատար, թուրքական եւ ադրբեջանական գործակալ»:

Ելոյթ ունեցաւ նաեւ նախկին քաղբանտարկեալ Սարգիս Հացպանեանը, որը շնորհակալութիւն յայտնեց հասարակութեան այն ակտիւ հատուածին, որի ամենօրեայ պայքարի շնորհիւ ազատ արձակուեցին քաղբանտարկեալները, այդ թւում՝ ինքը: Նա ասաց, թէ ազատութեան մէջ գտնուելով եւ քաղաքում զբօսնելով՝ ինքն ամէն քայլափոխի բնակարան վաճառելու կամ վարձով տալու յայտարարութիւններ է տեսել, ինչը վկայում է երկրից արտագաղթի մասին:

Հանրահաւաքն աւարտուեց ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ելոյթով: Տէր-Պետրոսեանը գնահատեց իշխանութիւն - ընդդիմութիւն երկխօսութեան առանձնայատկութիւնները: Նա յայտարարեց, որ Սերժ Սարգսեանը չի կողմնորոշւում երկխօսութեան հարցում, եւ շարունակեց. - «Դա ընդամէնը նրա շրջապատի անհասկացողութեամբ կամ իրավիճակի անսովորութեամբ պայմանաւորուած ժամանակաւոր անորոշութիւն է: Մարդիկ մինչեւ հիմա կրակել են, բանտերն են նստեցրել, հիմա ասում են՝ «եկէք նստենք, երկխօսենք»: Սովոր չեն դրան՝ ժամանակ է պէտք, որ սովորեն»:

Իր ելոյթում Լեւոն Տէր-Պետրոսեանը հանգամանօրէն անդրադարձաւ նաեւ 2008 թուականի Մարտի 1-ի սպանութիւնների բացայայտման խնդրին՝ վստահեցնելով, որ այսուհետեւ ՀԱԿ-ը ուշադրութիւնը կենտրոնացնելու է դրա վրայ:

Յայտարարուեց, որ յաջորդ հանրահաւաքը տեղի է ունենալու Օգոստոսի 1- ին: Միջոցառումը եզրափակուեց աւանդական երթով:

## ԳԻՒՄՐԻՈՒՄ ՓՈՐՁԵԼ ԵՆ ՀՐԿԻԶԵԼ ԻՐԱՒԱՊԱՇՏՊԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Յուլիս 6-ի Առաւօտեան ժամը 5-ի սահմաններում անյայտ անձինք կոտրել են Սախարովի անուան մարդու իրաւունքների պաշտպանութեան հայաստանեան գրասենեակի Շիրակի մասնաճիւղի ապակին եւ փորձել են հրկիզել գրասենեակը:

Աղմուկից արթնացած հարեւանները փորձել են հանգցնել 66 սկսուած հրդեհը եւ անմիջապէս զանգել հրշէջ ծառայութիւն, հրդեհը յաջողուել է հանգցնել:

«Չէի ուզենայ իրադարձութիւններից առաջ ընկնել, կամ խօսել իրաւապահներին փոխարէն, ովքեր պէտք է հետաքննութիւն իրականացնեն: Չեմ կարող ասել, որ սա կազմակերպութեան գործունէութեան հետ է կապուած, սակայն ամենայն հաւանականութեամբ գիտէին ինչ կազմակերպութիւն է», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում հրկիզմանը փորձը մեկնաբանեց Սախարովի անուան մարդու իրաւունքների պաշտպանութեան հայաստանեան գրասենեակի Շիրակի մասնաճիւղի ղեկավար Սէյրան Մարտիրոսեանը:

## «ԱՐՏԱԳԱՂԹԻ ԽՈՒՃԱՊԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԱՀԸ ՊԷՏՔ Է ՅԱՏՈՒԿ ՈՒՂԵՐՁՈՎ ԴԻՄԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ»,- Կ'ԸՍԵՆ ՄՏԱՒՈՐԱԿԱՆԵՐԸ

Հայաստանում արտագաղթի տագնապալի պատկերը խուճապային է, որը կանգնեցնելու համար հարկաւոր են ոչ ստանդարտ քայլեր: Լրագրողների հետ հանդիպմանն այս մասին ասաց Մատենադարանի գիտաշխատող, Գրականութեան ինստիտուտի փոխտնօրէն Վարդան Դեւրիկեանն՝ առաջարկելով նախագահին յատուկ ուղերձով դիմել ժողովրդին ու ասել, որ հայ ժողովրդի ապագան Հայաստանում է:

«Դա պէտք է լինի ոչ թէ մի հպանցիկ հարցազրոյցի, ճեպազրոյցի մէջ, մի որեւէ ձեռնարկութեան բացմանը, այլ պէտք է լինի յատուկ ուղերձով դիմելով»,- ասաց նա:

«Եւ այսօր՝ այս գրեթէ խուճապային դարձած իրավիճակի մէջ պէտք է սկսել մի հոգեբանական բեկում՝ դա կը լինի իշխանութեան միջոցով, դա կը լինի հասարակութեան միջոցով..., այսինքն՝ պէտք է սկսել այդ հոգեբանական բեկումը, որովհետեւ եթէ միայն առաջնորդուենք սոցիալ-հոգեբանական ծրագրով, եթէ անգամ ինչ-որ հրաշքով աշխատավարձերը աւելանան, ստեղծուած հոգեբանական վիճակը չի կարող փոխուել»,- կարծիք յայտնեց Դեւրիկեանը:

Նրա խօսքով՝ արտագաղթի պատճառ են դառնում այնպիսի հանգամանքներ, ինչպիսին է, օրինակ, բացօթեայ առեւտուրը արգելելու մասին Երեւանի քաղաքապետի որոշումը: «Այսօր արտագաղթը կասեցնելու կարեւորագոյն պայմաններից մէկը պէտք է այն լինի, որ վերջ տանք կեղծ փասադային միջոցառումներին, կեղծի էլիտարայնութեանը: Պէտք է մարդը լինի արժէքը: Աւելի լաւ է՝ մարդը Հանրապետութեան հրապարակում որեւէ բան վաճառի, քան թողնի Հայաստանից գնայ, թէ չէ Հայաստանը կը վերածուի էլիտար սպասարկման կառոյցի»,- ընդգծեց Գրականութեան ինստիտուտի փոխտնօրէնը:

Հոգեբան Լաուրա Պետրոսեանի խօսքով՝ արտագաղթի պատճառ է դառնում այն, որ կրթութիւն ստացած մասնագէտը չի զգում, որ ինքն այս երկրին անհրաժեշտ է: Չնայած այս հանգամանքին՝ հոգեբանը խորհուրդ է տալիս լաւ մտածել եւ համեմատել Հայաստանում առկայ դժուարութիւններն ու այն խոչընդոտները, որոնց արտագաղթողները հանդիպում են դրսում «ադապտացիոն շրջանում»:

«Այն երկրներում, որտեղ իշխանութիւնը խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչների ձեռքում է, այլ բան սպասել հնարաւոր չէ»,- յայտարարեց ազգագրագէտ Յարութիւն Մարութեանը՝ աւելացնելով, որ նման իշխանութեան ընդունած որոշումներն էլ իրենց բնորոշ են լինում: «Մեր կառավարող կուսակցութիւնը տիպիկ խոշոր բուրժուազիայի կուսակցութիւն է, այնտեղ հաւաքուած են հենց այդպիսի մարդիկ, ազգային գաղափարները նրանց ընդամէնը արտաքին քօղն է»,- ասաց Մարութեանը՝ արձագանքելով բացօթեայ առեւտուրն արգելելու մասին քաղաքապետի որոշմանը:

Ազգագրագէտը համոզուած է, որ արտագաղթի պատճառները ոչ այնքան սոցիալ-տնտեսական խնդիրների, որքան բարոյական, իրաւական եւ արժէքային համակարգերի հետ են կապուած: Նա ընդունելի համարեց նախագահի կողմից ուղերձով ժողովրդին դիմելու Դեւրիկեանի առաջարկը, բայց նշեց, որ նման ուղերձից յետոյ համակարգային փոփոխութիւններ կատարելու կոնկրետ քայլեր են հարկաւոր, որոնք կատարելու քաղաքական կամքի առնչութեամբ ինքը մեծ կասկածներ ունի:

«Խոշոր բուժուազիան պէտք է գիտակցի, որ մօտեցել է ռուբիկոնին»,- իշխանութիւններին դիմեց Մարութեանը՝ աւելացնելով, որ ռուբիկոնից այն կողմ հնարաւոր է՝ անկանխատեսելի զարգացումներ լինեն:

## ՇԻՐԱԿԻ ՀԿ-ՆԵՐԸ ՄԻՆԱՍԻ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ՀԱՐՑՈՎ ԴԻՄՈՒՄ ԵՆ ԷՌՆԵԿԵԱՆԻՆ

Շիրակի մարզի 36 հասարակական կազմակերպութիւններ դիմում են յղել արգենտինահայ գործարար, «Արմենիա միջազգային օդանաւակայաններ» ընկերութեան սեփականատէր Էդուարդո Էռնեկեանին՝ կոչ անելով հրաժարուել Մինաս Աւետիսեանի երկու որմնանկարները Երեւանի «Զուարթնոց» օդանաւակայանում կախած ունենալու գաղափարից եւ բաւարարուել դրանց կրկնօրինակները այնտեղ ունենալով:

Նշելով, որ կառավարութիւնը այս տարուայ Ապրիլի 28-ի որոշմամբ Մինաս Աւետիսեանի երկու որմնանկարներ անժամկէտ եւ անհատոյց տրամադրել է «Զուարթնոց» օդանաւակայանին՝ դրանք այնտեղ ցուցադրելու, նամակի հեղինակները շեշտում են. - «Մեզ համար անհասկանալի պատճառով տեղափոխելու մասին որոշումը կառավարութիւնը կայացրեց այն ժամանակ, երբ կէս տարուց աւելի Գիւմրու համայնքային իշխանութիւնները, Հայաստանի Հանրապետութեան մշակոյթի նախարարութիւնը եւ «Մինաս Աւետիսեան» հիմնադրամը ակտիւօրէն բանաւոր եւ գրաւոր բանակցում էին որմնանկարները Գիւմրիում վերականգնելու եւ Գիւմրիում տեղադրելու հարցերը, իսկ այդ մասին արդէն կազմուել էր համաձայնագիր համայնքապետարանի եւ հիմնադրամի միջեւ (2011 Փետրուար)»:

«Մինաս Աւետիսեանի որմնանկարներն իր բնօրրանից եւ գիւմրեցիներից հեռացնելու կառավարութեան որոշումները գնահատում ենք առանց պատշաճ հիմնաւորման կայացուած, յայտարարուած մշակութային ապակենտրոնացման քաղաքականութեան համատեքստում՝ տարօրինակ եւ վիրաւորական՝ մեր ու քաղաքի նկատմամբ», - նշում են Շիրակի մարզի հասարակական կազմակերպութիւնները իրենց դիմումում, որի տեքստը տարածել է ժուռնալիստների «Ասպարէզ» ակումբը:

Հայ news.am

massispost.com daily news updates

# ԼՈՒՐԵՐ

## ՁԵԿՈՅՑ. «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՄԵՆԱԼՈՒՐՋ ԽՆԴԻՐԸ ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ ՊԱԿԱՍՆ Է»

Հայաստանցիների 44 տոկոսը համարում է, որ երկրի կառավարման լաւագոյն ձեւը ժողովրդավարութիւնն է, իսկ ազգային էկոնոմիկայի կարգաւորման ամենաարդիւնաւէտ համակարգը՝ շուկայական տնտեսութիւնը: Սա են վկայում Վերակառուցման եւ զարգացման եւրոպական բանկի (ՎԶԵԲ) եւ Համաշխարհային բանկի (ՀԲ)՝ հրապարակած համատեղ զեկոյցի տուեալները:

«Կեանքն անցման շրջանում» անունը կրող այս հետազօտութիւնն անցկացուել է Կենտրոնական Եւրոպայի, յետխորհրդային տարածքի 33 պետութիւններում եւ Թուրքիայում: Հետազօտութեան նպատակն է պարզել, թէ ինչ ազդեցութիւն է թողել համաշխարհային տնտեսական ճգնաժամը պետութիւնների այս խմբի վրայ:

Արեւմտեան մասնագէտները պնդում են, որ Հայաստանի պարագայում ճգնաժամն ազդել է տնային տնտեսութիւնների 62 տոկոսի վրայ: Համեմատութեան համար՝ Ադրբեջանում այդ ցուցանիշը 55, իսկ Վրաստանում՝ 54 տոկոս է:

Վերլուծաբանները նաեւ պնդում են, որ Հայաստանում ամենալուրջ խնդիրը փոխադարձ վստահութեան պակասն է: Եթէ 2006 թուականին միմեանց վստահում էր հայաստանցիների շուրջ 30 տոկոսը, ապա այսօր այդ ցուցանիշը գրեթէ քառապատիկ անկում է արձանագրել՝ հասնելով 8 տոկոսի: «Հետազօտուող տարածաշրջանում սա ամենացածր ցուցանիշն է», - արձանագրում են զեկոյցի հեղինակները:

Նրանք, սակայն, նկատում են, որ պետական հաստատութիւնների նկատմամբ վստահութիւնը վերջին տարիներին որոշակիօրէն աճել է: Այդուհանդերձ, նախագահին, կառավարութեանն ու խորհրդարանին վստահող հայաստանցիների թիւը չի գերազանցում 33 տոկոսը:

Վստահութեան ամենաբարձր ցուցանիշն ունեն Զինուած ուժերը: Վերջին հարցման համեմատ վստահութեան ամենամեծ անկումը Հայաստանում արձանագրել է եկեղեցին: «Կրօնական հաստատութիւններին վստահող հայաստանցիների թիւը նուազել է 40 տոկոսով», - արձանագրում են զեկոյցի հեղինակները:

Վերակառուցման եւ զարգացման եւրոպական բանկի եւ Համաշխարհային բանկի մասնագէտները նաեւ նկատում են, որ Հայաստանում առաւել լուրջ խնդիրներից է շարունակում մնալ կոռուպցիան: Հարցուածների 20 տոկոսը նշել է, որ վերջին մէկ տարում կաշառք է տուել որեւէ պետական հաստատութիւնում, 25 տոկոսը խոստովանել է, որ ստիպուած է եղել կաշառել ճանապարհային ոստիկանութեան աշխատակիցներին: Ընդհանուր առմամբ, հայաստանցիների միայն 20 տոկոսն է կարծում, որ երկրում վերջին չորս տարիների ընթացքում կոռուպցիայի մակարդակը նուազել է, նշուած է զեկոյցում:

«Հարկ է նշել, որ Հայաստանի բնակչութեան միայն 22 տոկոսն է բաւարարուած կեանքի որակով», - նշում են հետազօտութեան հեղինակները, նկատելով նաեւ, որ այս ցուցանիշն անկում է արձանագրել սոցիալական գրեթէ բոլոր խմբերում՝ բացառութեամբ ամենաբարձր եկամուտի տէր մարդկանց:

«Հայաստանցի հարուստների շրջանում կեանքի որակից բաւարարուած է ամէն երկրորդը», - պնդում են եւրոպացի փորձագէտները՝ նաեւ նշելով, որ հայերը յետխորհրդային տարածքի ամենայոռետես ազգերից մէկն են:

«Հայաստանցիների միայն 33 տոկոսն է կարծում, որ իրենց զաւակներին լաւ ապագայ է սպասում: Լաւատեսների քանակը Հայաստանում 2006 թուականից ի վեր նուազել է շուրջ 10 տոկոսով», - փաստում են Վերակառուցման եւ զարգացման եւրոպական բանկի եւ Համաշխարհային բանկի համատեղ զեկոյցի հեղինակները:

## ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ «ԱՊՕՐԻՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ»



Լեռնային Ղարաբաղի Գանձասարի վանքի մօտ «ապօրինի շինարարութիւն

Լեռնային Ղարաբաղի Վանք գիւղում գտնուող 13-րդ դարի Գանձասարի վանական համալիրում «ապօրինի շինարարութիւն» է իրականացւում: Այս մասին ահազանգում է Լեռնային Ղարաբաղի զբօսաշրջութեան վարչութիւնը:

Մոսկուաբնակ բարերար Լեւոն Հայրապետեանը, ով մօտ 10 տարի առաջ վերանորոգել էր Գանձասարի վանական համալիրը եւ այնտեղ տանող ճանապարհը, ամիսներ առաջ էլ դիմել էր Արցախի թեմի հոգեւոր առաջնորդին՝ տեղեկացնելով, որ ցանկութիւն ունի Գանձասարի համալիրի պարիսպները սալիկապատել: Արցախի թեմի առաջնորդարանը նամակը փոխանցել է զբօսաշրջութեան վարչութեանը, որպեսզի վերջինս, որպէս իրաւասու մարմին, որոշում կայացնի:

«Նամակ ստացանք Արցախի հոգեւոր թեմից, որ ցանկութիւն է առաջացել մարմարէ սալիկներով երեսապատել պարիսպները: Օրէնքով դա արգելւում է, քանի որ դա աղճատում է յուշարձանի նախնական տեսքը», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում տեղեկացրեց զբօսաշրջութեան վարչութեան յուշարձանների պահպանութեան եւ ուսումնասիրման բաժնի պետ Սլավա Սարգսեանը՝ նշելով, որ իր գլխաւորած վարչութիւնը արգելել է շինարարութիւն իրականացնել:

Հարցը բուռն քննարկումների թէմա է դարձել Facebook սոցիալական ցանցում, իսկ «Ջենք լռելու» երիտասարդական նախաձեռնութիւնը կոչ է արել մոսկուաբնակ հայ գործարար Լեւոն Հայրապետեանին «չտապ կասեցնել Գանձասարում իրականացուող վանդալիզմը, ինչպէս նաեւ զգուշօրէն հեռացնել այդ անճաշակ մարմարէ սալիկները՝ վերադարձնելով պարսպին իր պատմական տեսքը»:

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՊԻՏԻ ՃՇԴԷ

Շարունակուած էջ 1-էն

Ջանիէի հետ եւ քննարկած են Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորման բանակցային գործընթացը:

Համանախագահները ԵԱՀԿ-ի գլխաւոր քարտուղարին ներկայացուցած են Յունիս 24-ին Կազանի մէջ Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի նախաձեռնութեամբ եւ միջնորդութեամբ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի միջեւ կայացած եռակողմ հանդիպման արդիւնքները եւ քննարկած են յառաջիկայ քայլերը:

Գնահատելով Յունիսի 24-ի եռակողմ հանդիպումը՝ համանախագահները շեշտած են. - «Հակառակ որ կողմերը Կազանի մէջ վերջնական համաձայնութիւն ձեռք չձգեցին հիմնարար սկզբունքներու վերաբերեալ, սակայն յառաջընթաց արձանագրուեցաւ: Կազանի հանդիպման արդիւնքը, այն է, որ կողմերը վերահաստատեցին բանակցային ճանապարհով կարգաւորման հասնելու պատրաստակամութիւնը եւ ստեղծուեցան նախադրեալներ, որոնք պէտք է օգտագործուին կարելիութեան չափ շուտ՝ Սկզբունքներու շուրջ համաձայնութիւն ձեռք ձգելու համար»:

Հայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսեան Ուքրանիա կատարած իր պաշտօնական այցելութեան ընթացքին դարձեալ շեշտած է Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքին վրայ:

«Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը ունի ինքնորոշուելու միջազգայնօրէն ճանաչուած իրաւունք: Այդ իրաւունքը պէտք է կեանքի կոչուի, եւ պէտք է ամբողջութեամբ իրացուի: Լեռնային Ղարաբաղի խնդրում այլ լուծում չկայ», - լրագրողներուն յայտարարած է Սարգսեան:

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ իր կարգին յայտարարած է որ, ինքնորոշման իրաւունքը պէտք չէ հակասէ Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան:

«Հայաստանը պէտք է հասկնայ, որ Ատրպէյճանի եւ Հայաստանի ներուժը անհամեմատելի է, եւ ժամանակը մեր օգտին կ՚աշխատի: Մեր ռազմական ծախսերը կը գերազանցեն Հայաստանի ամբողջ պետական բիւճէին», -ըսած է Ալիեւ, Յուլիս 5-ին ունեցած իր մէկ ելոյթ ժամանակ:

## ԹՈՒՐՔԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ Է ԸՆՏՐՈՒԵԼ ԵՐԴՈՒԵԱԼ ՀԱԿԱՀԱՅԸ

Թուրքիայի 25-րդ գումարման խորհրդարանի նախագահ է ընտրուել «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան անդամ, նախկին փոխվարչապետ Ջէմիլ Չիչէքը:

Թուրքական «Զաման» թերթի փոխանցմամբ՝ Ջէմիլ Չիչէքն ընտրուել է 3-րդ փուլում, երբ նրան անհրաժեշտ էր ընդամէնը 276 ձայն, սակայն նա ստացել է 322-ը: «Ազգայնական շարժում» կուսակցութիւնից խորհրդարանի նախագահութեան համար իր թեկնածութիւնն առաջադրած Թունջա Թոսքայը հաւաքել է 50 ձայն:

Քուէարկութեանը բացակայել են քրդական «Խաղաղութիւն եւ ժողովրդավարութիւն» կուսակցութեան պատգամաւորները, ովքեր բոյկոտ են յայտարարել: Իսկ «Ժողովրդա-հանրապետական» կուսակցութեան պատգամաւորները ներկայ են եղել, սակայն չեն մասնակցել քուէարկութեանը:

Նշենք, որ Ջէմիլ Չիչէքը յայտնի է իր հակահայ պահուածքով: Նա է եղել Արդարադատութեան նախարար, երբ Հրանդ Դինքի դէմ տխրահռչակ 301-րդ յօդուածով դատական գործ են յարուցել, որից շատ չանցած Հրանդ Դինքը «Ակօս»-ի խմբագրութեան դիմաց սպաննուեց:



Թուրքիոյ խորհրդարանի նախագահ Ջէմիլ Չիչէք

Նախորդ տարի նա թուրք գործարարների հետ հանդիպման ժամանակ խօսել էր 80-ականների ահաբեկչութիւնների մասին, նշելով թէ հայկական «ահաբեկչութեան» եւ PKK-ի ահաբեկչութեան միջեւ սերտ համագործակցութիւն կայ եւ յաւելել, թէ PKK-ի ահաբեկիչների մի մասը թլպատուած չեն, նկատի ունենալով, որ նրանք հայեր են:

2009-ին, երբ Թուրքիայում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրութիւնների ընթացքում Իգդիրում 85 տարի անընդմէջ ազերի քաղաքապետերից յետոյ առաջին անգամ քուրդը դարձաւ քաղաքապետ, Ջէմիլ Չիչէքը այն ժամանակ հետեւեալ կերպ էր արտայայտուել. «Քրդերը հաստատուեցին Հայաստանի հետ սահմանին»:

## ՀԱԿԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱՁԵՒ՝ ԱՍԹԱՆԱՅԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ

*Իսլամական երկիրներու կազմակերպութիւնը 28-30 Յունիսին Ղազախստանի մայրաքաղաք Աստանայի մէջ տեղի ունեցած անդամ երկիրներու արտաքին գործոց նախարարներու խորհուրդի ժողովին ընթացքին որդեգրեց 22 կէտերէ բաղկացած ատրպէյճանամէտ բանաձեւ մը:*

*Բանաձեւը կը խօսի Հայաստանի կողմէ կատարուած երեւակայածին բռնարարքի մը մասին, ինչպէս նաեւ խոր մտահոգութիւն կը յայտնէ «Ատրպէյճանի բռնագրաւուած հողամասերէ»ուն վրայ «հայ բնակեցուածներ»ու տեղակայման առնչութեամբ: Բանաձեւը՝ այս վերջին եզրով՝ ընթերցողը կը մղէ մտաբերելու իսրայէլացի բնակեցուածները եւ այդպիսով իսլամական աշխարհին մէջ առանցքային տեղ գրաւող պաղեստինեան արդար դատը չարաշահելով՝ կը փորձէ զօրակցութիւն հրահրել ատրպէյճանական յերիւրածոյ «դատ»ին նկատմամբ, սակայն ի զուր, որովհետեւ սրտխառնուք պատճառող այսպիսի զուգորդումներ չինծու եւ սնամէջ «դատ»ի մը խորք ու կշիռ չեն պարգեւեր, այլ պարզապէս անոր շուրջ զգացական տղայամիտ մթնոլորտ մը կը ստեղծեն:*

*Բանաձեւը իր տասներորդ կէտով ՄԱԿ-ի անդամ երկիրներու մնայուն պատուիրակներուն կոչ կ՚ուղղէ՝ ՄԱԿ-ի ընդհանուր ժողովներուն ընթացքին իրենց քուէարկութեամբ զօրակցելու «Ատրպէյճանի հողամասերու անձեռնմխելիութեան», այլ խօսքով՝ կազմակերպութիւնը իր զօրակցութիւնը կը յայտնէ ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի 66րդ նստաշրջանի նախնական օրակարգին վրայ գտնուող՝ «Ատրպէյճանի բռնագրաւուած տարածքներու մասին» բանաձեւին, եւ այլ պետութիւններէ ալ կը խնդրէ իր օրինակին հետեւիլ: ՄԱԿ-էն ետք անդամներու մեծագոյն թիւը ունեցող այս կազմակերպութեան բանաձեւին այս կէտը անոր միակ գործնական, ուստի եւ մտահոգիչ բաժինն է: Մնացեալ կէտերը ընդամէնը քարոզչական բնոյթ կը կրեն եւ ցանկութեանց աշխարհին կը պատկանին:*

*Նշեալ կազմակերպութեան որոշումները ընդամէնը անդամներուն ուղղուած յանձնարարականներ են եւ պարտաւորիչ բնոյթ չեն կրեր:*

*Անիկա անցեալին եւս որդեգրած է նմանօրինակ ատրպէյճանամէտ բանաձեւեր, որոնք այժմ անդամ երկիրներուն դարակները կը խճողեն:*

## ԳԻՒՄՐԻՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ԳԻՒՐՋԻԵՒԵԱՆ ՕՐԵՐԸ




*Գիւմրիում շաբաթ օրը մեկնարկել են ծնունդով գիւմրեցի, 20-րդ դարի յայտնի միստիկ փիլիսոփայ Գէորգի Գիւրջիեւին նուիրուած օրերը:*

*Այս կերպ գիւրջիեւագէտները ցանկանում են յայտնի փիլիսոփային ճանաչելի դարձնել նաեւ Հայաստանում: Գիւրջիեւեան օրերը մէկ շաբաթ կը տեւեն:*

*Պատմաբան Արթուր Նիկողոսեանը «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցում ասում է, որ վիրաւորական է, որ Գիւմրիում, որտեղ անցել է մեծ փիլիսոփայի մանկութիւնն ու պատանեկութիւնը, նրա մասին շատ քիչ բան գիտեն:*

*«Փորձեցինք այդ վիճակը շտկել: Այստեղ կայ նաեւ յարգանքի տուրքի խնդիր: Վերջին հաշուով, նման մեծ հայրենակից ունենալով, մենք դեռեւս քիչ բան ենք արել նրա ժառանգութիւնը հասկանալու, նրա յիշատակը յաւերժացնելու համար», - Նիկողոսեանը:*

*Այսօրուայ միջոցառմանը մասնակցում էին նաեւ Գիւրջիեւագիտական մոսկովեան կենտրոնից հրաւիրուած մասնագէտների բաւականին մեծ խումբ:*

*«Նա ստեղծել է աշխատութիւններ եւ հոգեւոր պրակտիկա, որը մենք օգտագործում ենք: Շատ լուրջ ու խորը ուսումնասիրութիւններ են դրանք: Նա այն մարդն է, ով ոչ միայն փիլիսոփայութիւն է զարգացրել, այլ նաեւ հիմնել է հոգեւոր զարգացման դրոյթները», - «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցում ասաց մոսկովեան կենտրոնի ղեկավար Արկադի Ռովներ, ով եւս տեղեակ էր, որ Գիւրջիեւը հայրենիքում ճանաչուած չէ:*

*Վերջերս, երբ Գիւմրիում քննարկում էին Շիրակի մարզի պատմամշակութային յուշարձանների վիճակը, առաջարկութիւն եղաւ Մշակոյթի նախարարին Գիւմրիում Գիւրջիեւի տուն-թանգարան հիմնել:*

*Պատմաբան Արթուր Նիկողոսեանը այնքան էլ նպատակայարմար չի համարում այս նախաձեռնութիւնը:*

*«Իրականում նրա տնից շատ չնչին մի հատուած է պահպանուել, այդտեղ արդէն մի քանի տասնամեակ ուրիշ մարդիկ են ապրում: Ներկայիս տունը ոչ մի կապ չունի այն տան հետ, որտեղ նա ծնուել եւ մեծացել է: Իմ խորին համոզմամբ, աւելի շատ կարելի է խօսել գիւրջիեւագիտական կենտրոնի բացման մասին», - ասաց Նիկողոսեանը:*

**www.massisweekly.com**
**updated every Friday**

## ՆԱՐԵԿ ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆԸ՝ ՉԱՅՔՈՎՍՔՈՒ ԱՆՈՒԱՆ ՄՐՑՈՅԹԻ ՅԱՂԹՈՂ



*Չայքովսքու անուան XIV միջազգային մրցոյթի յաղթող է դարձել հայաստանցի Նարեկ Հախնազարեանը՝ «Թաւջութակ» մասնագիտութեամբ: Նա ստացել է ոսկէ մետալ եւ 20 հազար եւրօ: Նարեկն արժանացել է նաեւ «հանդիսատեսի համակրանք» մրցանակին: Երկրորդ տեղն զբաղեցրել է Էդգար Մորոն՝ Ֆրանսայից, երրորդ տեղը՝ Իվան Կարիզնան Պելառուսից՝ համապատասխանաբար 15 հազար եւ 10 հազար եւրօ մրցանակով: Յունիսի 25-ին թաւջութակահարների փորձերի ժամանակ սկանդալային միջադէպ էր տեղի ունեցել: Նարեկ Հախնազարեանի ելոյթի պահին Ռուսաստանի պետական ակադեմիական սիմֆոնիկ նուագախմբի ղեկավար, ՌԴ ժողովրդական արտիստ Մարկ Գորենշտեյնը, դիմելով նուագախմբին, ասել է. «Թող ձեզ բոլորովին չմտահոգի, թէ ինչ է նուագում այդ «տաղանդաւոր» տղան, այս առլը: Դուք պէտք է նուագէք ինձ հետ»: Այս արտայայտութիւնը վիրաւորել է փորձին ներկայ լրագրողներին, որոնց շնորհիւ այս պատմութիւնը մեծ արձագանք է ստացել: Արդիւնքում Գորենշտեյնը ներողութիւն էր խնդրել իր արարքի համար:*

## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՆԱՐԵԿ ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆԻ ՀԵՏ

*Հայ թաւջութակահար Նարեկ Հախնազարեանը հարցազրոյց է տուել ռուսական «Իզվեստիա» պարբերականին:*

-Առաջին տեղը ոչ միայն պատուավարով տեղ ու համերգներ են, այլ նաեւ 20 հազար եւրօ պարգեւավճար: Ինչպէ՞ս ես տնօրինելու այդ գումարը:

***-Գումարի մասին չեմ մտածել, դեռ չգիտեմ: Հաւանաբար նոր թաւջութակ կը գնեմ:***

-Յաղթանակի 3 գրաւական կարո՞ղ էք նշել:

***- Աշխատասիրութիւն, յամառութիւն եւ յաղթանակի ձգտում: Յաղթելու շատ մեծ ցանկութիւն ունէի:***

-Ի՞նչ յատկանիշներ պէտք է ունենայ Չայկովսկու անուան մրցոյթի յաղթողը:

***- Վերը նշուածները, եւ իհարկէ տաղանդ:***

-Եթէ գաղտնիք չէ, Ինչպէ՞ս ես նախապատրաստւում ելոյթին:

***- Գաղտնիք չէ: Բեմ դուրս գալուց առաջ մօտ 10 րոպէով նստում եմ եւ փորձում եմ թուլանալ, կտրուել ամէն ինչից, ազատել գլուխս եւ թարմ ուղեղով դուրս գալ բեմ:***

-Եթէ նոտաները ընկնեն, սնահաւատ երաժիշտների պէս, կը նստե՞ս դրանց վրայ:

***- Ոչ: Նման բաների չեմ հաւատում:***

-Սեւ կատուներին նոյնպէ՞ս:

***- Փորձում եմ չհաւատալ, չնայած դա բարդ է: Մանկութիւնից պատմում են կատուների մասին:***

-Ի՞նչ պլաններ ունես:

***- Հանգստանալու եմ: Գնալու եմ հայրենիք՝ Հայաստան: Մէկ ամիս կը լինեմ ընտանիքիս, ընկերներիս հետ:***

-Ո՞ր փուլն էր ամենաբարդը:

***- Բոլորը, սակայն ամենաբարդը առաջին եւ վերջին ելոյթներն էին: Կարեւոր էր սկիզբը, քանի որ, ինչպէս սկսես, այնպէս էլ մրցոյթը կ՚անցկացնես: Իսկ վերջին փուլում կարեւոր է չկորցնել ինքնատիրապետումը, քանի որ մօտալուտ վերջնագծի միտքը յաճախ հանգստացնում է:***

-Կա՞ր զգացողութիւն, որ կը յաղթես:

***- Ոչ: Չէի լսում այլ մասնակիցների, քանի որ այլ ելոյթների հետ չէի կարող համեմատուել: Ուղղակի ելոյթ էի ունենում ինչպէս կարող էի: Եթէ ընդհանրացնենք, ապա այս յաղթանակը միայն իմը չէ, այլ նաեւ բոլոր նրանցը, ով աջակցել եւ օգնել է ինձ եւ բնականաբար, Պոսթոնի եւ Մոսկուայի կոնսերուատորիաների իմ դասախօսներինը:***

## ՅԱՅՏՆԻ ԵՐԳԵՀՈՆԱՀԱՐ ՎԱՀԱԳՆ ՍՏԱՄԲՈԼՑԵԱՆԸ ՄԱՀԱՑԵԼ Է

*Հայաստանի ժողովրդական արտիստ, միջազգային մրցոյթների դափնեկիր, երգեհոնահար Վահագն Ստամբոլցեանն Յուլիսի 5-ի առաւօտեան մահացել է ինֆարկտից: «Էրեբունի» բ/կ-ից յայտնեցին, որ նա սրտային անբաւարարութիւն է ունեցել եւ առաւօտեան սրտի աշխատանքը կանգ է առել:*

*Յունիսի 18-ին Վահագն Ստամբոլցեանը տեղափոխուել էր Էրեբունի բժշկական կենտրոնի անյետաձգելի սրտաբանութեան ինտենսիւ թերապիայի բաժանմունք:*

*Նշենք, որ Վահագն Ստամբոլցեանը իր 80-ամեայ յոբելեանի առթիւ համերգային շրջագայութիւններով էր հանդէս գալիս: Յունիսի 17-ին Կապանի արուեստի պետական քոլեջը հիւրընկալել էր սիրուած երգեհոնահարին: Երգեհոնահարը նշել էր, որ ինքը չի սիրում նշել իր ծննդեան օրերը, բայց չի կարողացել մերժել մշակոյթի նախարարութեան եւ կամերային երաժշտութեան ազգային կենտրոնի նախաձեռնութիւնը:*

*Ստամբոլցեանի յոբելեանին նուիրուած 1-ին համերգները տեղի են ունեցել Սանկտ-Պետերբուրգում, քանի որ նա ուսումը ստացել է հենց այդ քաղաքում եւ 10 տարի էլ աշխատել այնտեղ:*

*Կապանում իր ելոյթից յետոյ, Վահագն Ստամբոլցեանի առողջական վիճակը վատթարացել է եւ նրան սրտի կաթուածով տեղափոխել են Կապանի բժշկական կենտրոն, այնտեղից էլ՝ «Էրեբունի» բժշկական կենտրոն:*

# ԲԱԿՕ ՍԱՀԱԿԵԱՆ. «ԿԸ ԳԱՅ ԱՅԴ ՕՐԸ, ԵՐԲ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԵՆՔ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ»

*Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակօ Սահակեանը բացառիկ հարցազրոյց է տուել «Ազատութիւն» ռատիօկայանին: Ստորեւ ներկայացնում ենք հարցազրոյցն ամբողջութեամբ.*

Հարց.- Կազանի հանդիպումից առաջ փորձագիտական, նոյնիսկ իշխանական շրջանակներում յոյսեր կային, որ Ատրպէյճանն ու Հայաստանը ուր որ է պէտք է ստորագրեն, ընդունեն այդ առաջարկներ: Բայց դա տեղի չունեցաւ: Հանդիպման այդ արդիւնքը Ձեզ համար սպասելի՞ էր:



*Պատասխան. - Մենք բոլոր հանդիպումներից՝ լինի դա վերջին, լինի նախկին, գրեթէ միատեսակ ակնկալիքներ ենք ունենում, որովհետեւ մենք յուսով ենք, որ հերթական հանդիպումների ժամանակ կողմերը կը գան համաձայնութեան, որի շնորհիւ Արցախը կը շարունակի իր մասնակցութիւնը բանակցային գործընթացում: Մենք բազմիցս յայտարարել ենք, որ ողջունում ենք միջազգային հանրութեան ջանքերը արցախեան հիմնախնդիրը խաղաղ ճանապարհով կարգաւորելուն ուղղուած: Եւ բացառութիւն չէր Կազանի հանդիպումը: Այդ նոյն ակնկալիքն ունէինք: Եւ այս պահի դրութեամբ, որոշակի բաւարարուածութիւն ունենք եւ յատկապէս, որ Մինսկի խմբի համանախագահներն իրենց յայտարարութիւններում նշում են, որ վերջնական կարգաւորումը առանց Արցախի հանրապետութեան մասնակցութեան անհնարին կը լինի: Եւ մենք սպասում էինք, որ վերջին հանդիպման ժամանակ աւելի ստոյգ պայմանաւորուածութիւններ ձեռք կը բերուեն հենց Արցախի մասնակցութիւնը բանակցային գործընթացում ապահովելու համար: Մենք ունենք որոշակի տեղեկութիւններ վերջին հանդիպման մասին, եւ ինչպէս յաճախակի էր լինում, դժբախտաբար, այս վերջին հանդիպման ժամանակ եւս Ատրպէյճանը ցուցաբերեց մի կեցուածք, որը չնպաստեց այդ բանակցութիւնները լիարժէք ձեւաչափին մօտեցնելուն: Բայց մէկ է, մենք մնում ենք մեր յոյսին եւ կարծում ենք, որ կը գայ այդ օրը, երբ կը մասնակցենք բանակցային գործընթացին:*

Հարց. - Իսկ եթէ Ատրպէյճանը ցուցաբերեր կառուցողական կեցուածք եւ Կազանում ստորագրեր առաջարկուող փաստաթուղթը: Դա ենթադրում է նաեւ տարածքների վերադարձ: Համաձա՞յն էք այդ ամէնի հետ:

*Պատասխան. - Քանի որ համանախագահները փաստում են, որ առանց ԼՂ-ի դժուար է որեւէ վերջնական համաձայնութիւն ձեռք բերել, դա նշանակում է, որ ցանկացած որոշում միայն ու միայն պիտի ընդունուի Արցախի մասնակցութեամբ: Մենք ակնկալում ենք, որ սկզբնական փուլում կը վերականգնուի բանակցային ձեւաչափը, որտեղ Արցախը հնարաւորութիւն կ՚ունենայ մասնակցելու, որտեղ էլ մենք կ՚արտայայտենք մեր տեսակէտը: Մենք հեռու ենք այս պահի դրութեամբ որոշումների ընդունման փուլից: Մենք գտնւում ենք մի փուլում, որտեղ ՀՀ-ն լուրջ ջանքեր է գործադրում, որպէսզի Արցախը բանակցութիւնների մասնակից դառնայ: Մենք միշտ նշում ենք, որ Ատրպէյճանի հետ պատրաստ ենք քննարկելու ցանկացած հարց: Եւ տայ Աստուած, որ գայ այդ ժամանակը: Այնպէս որ, այս պահի դրութեամբ ցանկացած պայմանաւորուածութիւն կրում է միջանկեալ բնոյթ:*

Հարց. - Ձեր կարծիքով, ի՞նչ զարգացումներ կը լինեն բանակցային գործընթացում, ի՞նչ քայլեր էք ակնկալում միջնորդ երկրներից:

*Պատասխան. - Մենք խորապէս համոզուած ենք, որ միջնորդ երկրները անկեղծ են իրենց դրսեւորումների մէջ: Եւ այս տարիների ընթացքում մենք համոզուել ենք, որ միջազգային հանրութիւնը եւ յատկապէս համանախագահները կատարում են աշխատանք, որն ուղղուած է այս յարաբերական խաղաղութիւնը ապահովելուն եւ վերջնական խաղաղութիւն ձեռք բերելուն: Ընդհանրապէս չենք թաքցնում, որ այս իրավիճակը, այս յարաբերական խաղաղութիւնը ձեռք է բերուել նաեւ համանախագահող երկների շնորհիւ, ինչի համար, կարծում եմ, թէ՛ հայկական կողմը, թէ՛ Ատրպէյճանը շնորհակալ պէտք է լինեն, որովհետեւ այս յարաբերական խաղաղութիւնը շատ-շատ անգամ գերադասելի է, քան ցանկացած պատերազմական գործողութիւն: Եւ կարծում եմ, որ համանախագահները շարունակելու են իրենց ջանքերը եւ որոշակի լրացուցիչ աշխատանքներ են իրականացնելու այս իրավիճակը պահպանելու ուղղութեամբ:*

Հարց. - ՀՀ-ի եւ Ատրպէյճանի միջեւ ինչ-որ փաստաթղթի ստորագրում մօտ ապագայում՝ մօտակայ ամիսներին, հնարաւոր համարո՞ւմ էք:

*Պատասխան. - Այս վերջին տարիներին մենք բոլորս հնարաւորութիւն ենք ունեցել համոզուելու, որ հայկական կողմը, իր պատասխանատւութիւնից միջազգային հանրութեան առջեւ եւ իր շահագրգռուածութիւնից ելնելով, փորձում է ամէն ձեւի կառուցողական կեցուածք դրսեւորել՝ նպաստելով խաղաղ գործընթացի ե՛ւ պահպանմանը, ե՛ւ այդ գործընթացը տրամաբանական աւարտին հասցնելուն: Դժբախտաբար, մենք այսօր ունենք՝ ի դէմս Ատրպէյճանի, մի մասնակից բանակցային գործընթացում, որը չի դադարեցնում իր ոչ կառուցողական կեցուածքը, քայլերը այդ բանակցութիւններում, ինչը, ըստ մեզ, հիմնական խոչընդոտն է հանդիսանում ամբողջ այդ գործընթացում: Այդ կեցուածքին գումարուել են նաեւ ռազմատենչ յայտարարութիւնները, եւ այդ քաղաքականութիւնը չի տեղաւորւում միջազգային հանրութեան կողմից ձեռնարկուած քայլերի շրջանակներում: Հետեւաբար այդպիսի մօտեցումը եւ այդպիսի մասնակցութիւնը հիմնական պատնէշն է: Եւ մենք կոչ ենք անում համանախագահներին եւ միջազգային հանրութեանը իր վերաբերմունքը փոխել Ատրպէյճանի նկատմամբ եւ, ինչու չէ, անհրաժեշտութեան դէպքում պարտադրողական քայլերի հրաւիրել, որը եւ կը նպաստի թէկուզ եւ այս խանգարուած ձեւաչափով բանակցութիւնների շարունակութեանը: Այս փուլում Ատրպէյճանին պէտք է հրաւիրել աւելի զուսպ քաղաքական մշակոյթ ցուցաբերելու:*

Հարց. - Որքանով են լուրջ ատրպէյճանական սպառնալիքները, որոնք աւելի յաճախակի են դառնում: ԼՂ ղեկավարութեանը մտահո՞գում են այդ սպառնալիքները:

*Պատասխան. - Դա պիտի մտահոգի ոչ միայն Արցախի հանրապետութեան, Արցախի ժողովրդին: Այդ սպառնալիքները իրենց բնոյթով միայն Արցախի անվտանգութեանը կամ միայն հայկական կողմին չեն ուղղուած: Դրանք կրում են ահաբեկչական բնոյթ: Իսկ եթէ դա ահաբեկչութիւն է, ուրեմն պէտք է մտահոգի ամբողջ քաղաքակիրթ աշխարհին: Այդ առումով ես գտնում եմ, որ այդ սպառնալիքները հաւասարաչափ վերաբերում են թէ՛ Արցախին, թէ՛ հայկական կողմին, այնպէս էլ միջազգային հանրութեանը: Ամէն օր Ատրպէյճանի քաղաքական իշխանութիւնները հանդէս են գալիս սպառնալիքներով, եւ դրանք ուղեկցուած են միլիտարիստական կոնկրետ քայլերով, եւ մենք մտահոգուած ենք եւ մեզ պէս պէտք է մտահոգուի նաեւ միջազգային հանրութիւնը: Այդպիսի քաղաքականութեան շրջանակներում մենք պարտաւոր ենք հաշուի առնել եւ չբացառել, որ Ատրպէյճանը կարող է մի օր այդ խօսքերից գործի անցնել: Հետեւաբար մենք կառուցում ենք մեր աշխատանքները՝ ելնելով այդ իրողութիւնից:*

Հարց. - Պատերազմի սցենարին լիովին պատրա՞ստ էք:

*Պատասխան. - Իհարկէ: Այստեղ մեր դէպքում որեւէ արտառոց պահուածք չենք ընդունում: Մենք, խորապէս համոզուած լինելով, որ այս հարցը պէտք է կարգաւորուի խաղաղ պայմաններում, միեւնոյն ժամանակ պարտաւոր ենք մտածել՝ հաշուի առնելով մեր հարեւանի պահուածքը, նրանց կողմից հնչեցուած յայտարարութիւնները: Պարտաւոր ենք նաեւ ապահովել մեր երկրի անվտանգութիւնը, որպէսզի մեր երկրի բնակչութիւնը ի վիճակի լինի այդ յարաբերական խաղաղութեան պայմաններում իրենց առօրեան կազմակերպելու:*

Հարց. - Փորձագիտական շրջանակներում գնալով աւելի է ամրապնդւում, տարածւում այն տեսակէտը, որ պատերազմի հաւանականութիւնը գնալով աճում է: Դուք կիսո՞ւմ էք այդ կարծիքը:

*Պատասխան - Այդ փորձագէտները հենց հիմք ենք ընդունում Ատրպէյճանի կողմից իրականացուած քաղաքականութիւնը: Եթէ մի երկրում ամէն օր ասում են, որ եթէ ոչ այսօր, ապա վաղը մենք այդ հարցը լուծելու ենք զէնքի ուժով, ապա այդ փորձագէտները իրաւունք ունեն այդպիսի եզրակացութիւն անելու:*

*Մենք լրջագոյն աշխատանքներ ենք իրականացնում, որպէսզի խուսափենք հաւանական պատերազմական գործողութիւններից: Ես*

*Շար.ը էջ 19*



# ՄԵԾԱՐԱՆՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԴՈԿՏ. ԱՐԺ. Տ. ԶԱՒԷՆ ԱՒԱԳ ՔՀՆՅ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԻ



Կիրակի, Յունիս 26 երեկոյեան Առաջնորդարանի «Զօրայեան» Թանգարանին մէջ Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի նախագահութեամբ եւ կազմակերպութեամբ ԹՄՄ Լոս Անճելըսի Մասնաճիւղի, տեղի ունեցաւ Մեծարանքի Հանդիսութիւն Դոկտ. Արժ. Տ. Զաւէն Աւագ Քհնյ. Արզումանեանի Մշակութային-Հոգեւոր 60 տարիներու ծառայութեան եւ 2011ին հրատարակուած երեք հատորներուն առիթներով: Ներկայ էին Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան, Գերշ. Տ. Աւագ Արք. Ասատուրեան, Հոգշ. Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան, Կլէնտէյլի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ ժողովրդապետ՝ Հայր Գրիգոր Վրդ. Շահինեան եւ մեծ թիւով գրասէր հասարակութիւն:

Կազմակերպիչ Յանձնախումբի անունով ողջոյնի խօսքով ԹՄՄ Լոս Անճելըսի Մասնաճիւղի անունով հանդէս եկաւ Վաչէ Սեմերճեան:

Ապա Հոգշ. Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան եւս հանդէս եկաւ ողջոյնի խօսքով եւ անդրադարձաւ Դոկտ. Տ. Զաւէնի հոգեւոր ծառայութեան եւ օգտակար հրատարակութիւններուն եւ իր խօսքին մէջ ըսաւ. «Ան արմաշական ոգիին վերընձիւղումն է, համայնքին ներքեւ՝ Գարեգին Յովսէփեանց Կաթողիկոսին մշակուած իմացականութեանը: Մեր խօսքը պարզապէս այս հոգեւորականին նուիրումին եւ շնորհքին մասին է: Ինքը՝ Տէր Զաւէն, իր գործով կ՚ողջունէ իրաւմամբ եւ արժանեօք իր կենդանութեան իր անմահութիւնը»: Քաջառողջութեան եւ արեւշատութեան մաղթանքներ կատարեց:

Օրուան հանդիսավարն էր Հրաչ Սեփեթճեան, որ սրտագին բարի գալուստ մաղթեց հիւրերուն եւ ամփոփ կերպով ներկայացուց օրուան մեծարեալ՝ Դոկտ. Արժ. Տ. Զաւէն Աւագ Քհնյ. Արզումանեանը: Ընթերցեց ԹՄՄ կողմէ ստացուած շնորհաւորական նամակները՝ այս բացառիկ ձեռնարկին առթիւ, որոնք ուղղուած էին մեծարեալ Տէր Հօր: Շնորհաւորական ղրկած էին Գերշ. Տ. Եղիշէ Արք. Կիզիրեան՝ Ֆիլատելֆիայէն, Արժ. Տ. Գարեգին Աւագ Քհնյ. Գասպարեան՝ Նիւ Եորքէն, Արժ. Տ. Յովսէփ Քհնյ. Կարապետեան՝ Ուաշինկթըն Տի. Սի.էն եւ Գրիգոր Փիտէճեան՝ երաժշտագէտ, (Հայաստանի Հանրապետութեան Կոմպոզիտորներու եւ Երաժշտագէտների Միութեան Ակադեմական անդամ) Նիւ Եորքէն: Ապա իր խօսքին մէջ ըսաւ. «Անհուն հրճուանքով այսօր կը կատարենք բացումը հանդիսութեան մը՝ նուիրուած անգուգական կրօնականի մը, բազմաբեղուն պատմագիրի մը, ազնիւ մարդու մը եւ մամուլի անխոնջ աշխատակիցի մը, որուն հոգեւորական եւ մշակութային գործունէութեան վաթսունամեակն է, իսկ ցարդ հրատարակած 11 գործերէն առաջինը՝ երեսունտարի առաջ լոյս տեսած է:

Արզումանեան Աւագ Քահանան ճանչնալն ու հետը գործակցիլը անմոռանալի երեւոյթ եւ փորձառութիւն պիտի ըլլայ մշակութասէր անձի մը համար: Իսկ իր համակրանքը հանդէպ Թէքէեան Մշակութային Միութեան մեր հպարտաուիթ հարստութիւնը կը նկատենք:

Պահ մը ետ երթանք մարդուն

Շար.ը էջ 17

# ՄԱՐԻՆԷ ԶՈՒԼՈՅԵԱՆԻ ՆԿԱՐՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ



Անցեալ Հինգշաբթի, Յունիս 30ին Ս. Ղեւոնդ Մայր տաճարի Զօրայեան Թանգարանին մէջ, բացումը կատարուեցաւ գեղանկարչուհի Մարինէ Զուլոյեանի նկարչական ցուցահանդէսին:

Տօքթ. եւ Տիկ. Վահրամ եւ Փոլինա Պիրիճիգի հովանաւորութիւնը վայելող սոյն ցուցահանդէսին ներկայ էին Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, ինչպէս նաեւ արուեստասէրներու ընտրանի հասարակութիւն մը:

Առաջնորդական փոխանորդ Հոգեշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեանի ողջոյնի խօսքէն ետք ելոյթ ունեցաւ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան: Ան իր անխառն ուրախութիւնը յայտնեց որ Մոնթրէալ քաղաքէն շնորհալի արուեստագիտուհի Մարինէ Զուլոյեան մեզի կը ներկայանայ իր ուրոյն երանգապնակի փունջ մը ստեղծագործութիւններով: Զինք շնորհաւորելէ ետք յայտնեց նաեւ որ Մարինէն թէ նկարչուհի է, թէ մայր եւ թէ երէցկին (կողակիցը Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Պոյաճեանի): Յովնան Սրբազան շնորհակալութիւն յայտնեց սոյն միջոցառումը հովանաւորող Տօքթ. Վահրամ Պիրիճիգին եւ միաժամանակ յայտնեց որ ցուցահանդէսին գոյացած հասոյթը պիտի յատկացուի առաջնորդարանի կողմէ հաստատուած քահանայութեան պատրաստուող ուսանողներու ֆոնտին:

Այնուհետեւ ներկաներն առիթն ունեցան մօտէն ծանօթանալու Մարինէին եւ իր ստեղծագործութիւններուն: Իր գործերը գուարթ գոյներով ներկայացուած 19րդ դարու ազնուական հայուհիներու առօրեան է, իրենց փարթամ եւ ինքնատիպ տարազներով ու նորաձեւ շղարշներով: Թէեւ տեղ տեղ առկայ են միակերպ երեւոյթներ ու տիպարներ, այսուհանդերձ գնահատելի է իր ճաշակն ու լաւատեսութիւն ներշնչող վառ գոյներու համադրումը:

Նորանոր յաջողութիւններ գանատահայ նկարչուհիին:

